ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 102

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 022-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապե տության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1 -
ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութ յան օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2022թվականի փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2022թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 22-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

ա)Որոշման 1-ի կետով հաստատված համայնքի բյուջեի եկամուտների հատված 1-ում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 1-ի:

բ)Որոշման 2-րդ կետով հաստատված
համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման հատված 2-ում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 2-ի:

գ)Որոշման 3-րդ կետով հաստատված համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հատված 3-ում կատարել փոփոխություն համաձայն հավելված 3-ի:

դ)Որոշման 4-րդ կետով հաստատված համայնքի բյուջեի միջոցների տարևերջի հավելուրդի կամ դեֆիցիտի /պակասուրդի/ հատված 4-ում կատարել փոփոխություն համաձայն հավելված 4-ի:

ե)Որոշման 5-րդ կետով հաստատված համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների հատված 5-ում կատարել փոփոխություն համաձայն հավելված 5-ի:

զ)Որոշման 6-րդ կետով հաստատված համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման հատված 6-ում կատարել փոփոխություն համաձայն հավելված 6-ի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 101

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել <<Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան >>համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված Մեծամորի համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների համար նվազագույն ամսական աշխատավարձի դրույքաչափը սահմանել 91 275 (իննսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունհինգ) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 100

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել <<Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված Մեծամորի համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների համար նվազագույն ամսական աշխատավարձի դրույքաչափը սահմանել 91 275 (իննսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունհինգ) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2022թ.մարտի 28-ի N099 որոշման

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ»

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԵԾԱՄՈՐ 2022

1. Ընդանուր դրույթներ

1.1. «Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 28-ի N 099 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում՝ ազգային մշակույթի պահպանման և գրադարանային գործունեություն կազմակերպելու նպատակով:
Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առրտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով, Հիմնադրի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Համայնքի ավագանի (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդես է գալիս Մեծամոր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կամզակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձաց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7. Կազմակերպությունը ունի Հայասատնի Հանրապետության Զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, տարբերանշան, խորհրդանիշեր, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.8. Կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,

Կրճատ՝ «Մեծամորի մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ «Дом культуры и библиотека общины Мецамор» общинная не коммерческая организация

Կրճատ «Дом культуры и библиотека Мецамора» ОНО

1.11. Կազմակերպությոն գտնվելու վայրն է՝ ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 2 շենք:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը

2.1. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է Մեծամոր համայնքում Հայ-ազգային մշակույթի պահպանումը, զարգացումը և տարածումը, ինչպես նաև գրադարանային գործունեության կազմակերպումը:

2.2. Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) Մշակում և հիմնադրին է ներկայացնում Մեծամոր համայնքի մշակութային զարգացման տարեկան և եռամսյա ծրագրեր,

2) Մասնակցում է ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը, կազմակերպում է համայնքային նշանակության հոգևոր-մշակութային և այլ միջոցառումներ,

3) Նպաստում է մանկական և երիտասարդական գեղարվեստական նոր խմբերի ստեղծմանն ու գործունեությանը,

4) Ապահովում է գործող գեղարվեստական, ազգագրական, դասական և ժամանակակից երաժշտական համույթների, խմբերի, անհատ արվեստագետների (նկարիչներ, գրողներ, քանդակագործներ, երաժիշտներ և այլն) մասնակցությունն ու հանրապետական, միջազգային փառատոներին, ցուցահանդեսներին, մրցույթներին և այլ մշակութային միջոցառումներին,

5) Ապահովում է շինությունների նորոգումը, գույքի, սարքավորումների, տեխնիկական միջոցների պահպանումը և անխափան գործունեությունը, հիմնական և շրջանառու ֆոնդերի արդյունավետ օգտագործումը,

6) Աջակցում է ազգային մոռացված արհեստների, արվեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը,

7) Աջակցում է Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանմանը, կազմում և հիմնադրի հաստատմանն է ներկայացնում մշակույթի տան հիմնական և ընթացիկ նորոգման, բարեկարգման, գույքի, սարքավորումների, ցուցանմուշների ձեռքբերման տարեկան և հեռանկարային ծրագրեր,

8) Համագործակցում է Մեծամորի համայնքապետարանի բաժինների և համայնքային հիմնարկների, ձեռնարկությունների հետ,

9) Ձևավորում և օգտվողներին տրամադրում ազգային, արտասահմանյան տպագիր արտադրանքի հավաքածուն՝ առանց սահմանափակումների նրանց պահանջարկներին համապատասխան,

10) Իրականացնում է գրադարանային, տեղեկատվական-մասնագիտական աշխատանք, գրադարանից օգտվողներին տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն,

11) Ընթերցողներին մատուցում է գրադարանային տարբեր բնույթի ծառայություններ,

12) Իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի համալրում՝ ձեռքբերումների, նվիրաբերումների, գնման, փոխանակումների միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում հրատարակված՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված գրականության պարտադիր օրինակներով,

13) Ձևավորում է տպագիր արտադրանքի փոխանակման հավաքածու,

14) Հաշվառում, մշակում, համակարգում է մուտքագրվող նյութերը և գրանցում դրանց վերաբերյալ տեղեկությունը թղթային և յալ նոյական կրիչների տվյալների շտեմարաններում,

15) Իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի ամբողջականությունն ու անվթարությունն ապահովող պահպանության համալիր միջոցառումներ (խնամք, վերականգնում, կազմում և այլն),

16) Ինքնուրույն է սահմանում գրադարանից օգտվելու կարգը, օգտվողների կողմից պատճառված վնասի փոխհատուցման ձևերն ու չափերը,

17) Ինքնուրույն է որոշում համալրվող գրականության տեսականին,

18) Ինքնուրույն է մշակում հիմնական գործունեության ընթացիկ և զարգացման հեռանկարային ծրագրերը,

19) Հիմնադրի հետ համաձայնեցնելով՝ իրականացնում է հավաքածուից օգտագործման համար ոչ պիտանի տպագիր արտադրանքի դուրսգրումը՝ բացառությամբ պատմամշակութային արժեքների,

20) Ձևավորում է իր տնտեսական զարգացման ծրագիրը, որոշում ծառայությունների մատուցման կարգը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ,

21) Ապահովում է կազմակերպությանն ամրացված շենքերի ու շինությունների պահպանությանն ու օգտագործմանն անհրաժեշտ պայմանակարգը (ռեժիմը), իրականացնում հակահրդեհային անվտանգության միջոցառումներ,

22) Համագործակցում է ՀՀ և արտերկրների գրադարանային գործի, մատենագիտական, տեղեկատվական կազմակերպությունների հետ՝ տեսական և գիտագործնական խնդիրների, մշակութային, կրթադաստիարակչական ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:

3. Կազմակերպության կառավարումը

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը և նրա տեղակալը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկային և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

ե) Հաստատում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է Կազմակերպությունում ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ պատշաճ կատարման համար:

3.5. Համայնքի ղեկավարը՝

ա) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) Իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

դ) Լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքը խոտանման կամ վարձակալության հանձնման համար,

է) Հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և(կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

թ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժ) Իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.6. Կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենն, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության տնօրենն օրենքով Հիմնադրի ու Համայնքի ղեկավարը որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարը որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը,

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին,

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից,

ե) Տնօրենի պաշտոնին նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանն պատճառած վնասի համար,

զ) Կազմակերպության գործադիր մարմնին նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.7. Կազմակերպության տնօրենը.

ա) Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելու դեպքում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին),

ե) Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) Կատարում է աշխատանքի բաշխում,

է) Սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) Օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) Ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Համայնքի ղեկավարին,

ժ) Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Համայնքի ղեկավարի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Համայնքի ղեկավարի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:

4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները,

իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

4.10. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

4.11. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.12. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.13. Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

4.14. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

4.15. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.16. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

5.2. Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Համայնքի բյուջե:

5.3. Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 099

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 23-ի <<Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին թիվ 0331 որոշումը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել <<Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

3. Համայնքի ղեկավարին սույն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 098

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 23-ի <<Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին թիվ 0330 որոշումը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել <<Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

3. Համայնքի ղեկավարին սույն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2022թ.մարտի 28-ի N100 որոշման

«ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ»

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԵԾԱՄՈՐ 2022

1. Ընդանուր դրույթներ

1.1. «Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 23-ի N 0330 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի՝ արտաքին լուսավորության և կանաչապատման հետ կապված աշխատանքների իրականացման նպատակով:
Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առրտրային կազմակերպությունների մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքներով, Հիմնադրի որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Համայնքի ավագանի (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականցնող լիազորված մարմին հանդես է գալիս Մեծամոր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրկանացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կամզակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձաց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7. Կազմակերպությունը ունի Հայասատնի Հանրապետության Զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, տարբերանշան, խորհրդանիշեր, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված անհատականացման այլ միջոցներ:

1.8. Կազմակերպութոյունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝
Հայերեն լրիվ՝ «Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,
Կրճատ՝ «Մեծամորի լուսավորություն և կանաչապատում » ՀՈԱԿ

Ռուսերեն լրիվ «Освещение и озеленение общины Мецамор» общинная не коммерческая организация
Կրճատ «Освещение и озеленение Мецамора» ОНО

1.11. Կազմակերպությունն գտնվելու վայրն է՝ ՀՀ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նորապատ գյուղ, 5-րդ փողոց, թիվ 11 շենք:

2. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը

2.1. Կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է Մեծամոր համայնքի տարածքի կանաչապատման և լուսավորության համակարգերի աշխատանքների իրականացման ապահովումն:

2.2. Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) Համայնքում փողոցային (արտաքին) լուսավորության կազմակերպում,
2) Համայնքում սյուների, լուսամփոփների և լապտերների տեղադրում, վերանորոգում,
3) Համայնքում արտաքին լուսավորության հաղորդալարերի և մալուխների մոնտաժում ու ապամոնտաժում,
4) Համայնքում արտաքին լուսավորության ավտոմատ սարքավորումների հավաքակցում, վերանորոգում և վերակառուցում,
5) Համայնքի շենքերի շքամուտքերի, ինչպես նաև Համայնքին պատկանող բնակելի ու ոչ բնակելի շենքերի ներքին և արտաքին լուսավորության ցանցի մոնտաժում, վերանորոգում և պահպանում,
6) Համայնքի կանաչապատման աշխատանքների իրականցում,
7) Համայնքի կանաչ տարածքների (տնկարկների) ընդարձակում,
8) Համայնքի կանաչ տարածքների խնամք և ոռոգում,
9) Համայնքի պուրակների, հրապարակների և հուշարձանների մաքրում ու պահպանություն,
10) Համայնքի տնկարանային (այգեգործական) տնտեսության՝ բաց գրունտի և փակ գրունտի աշխատանքների կազմակերպում,
11) Ծառաթփային բույսերի և ծաղիկների աճեցում, վերարտադրության կազմակերպում,
12) Համայնքի կանաչ տարածքների մոնիթորինգի և քարտեզագրման աշխատանքների կազմակերպում,
13) Համայնքի լանդշաֆտային պլանավորման (դիզայն) կազմակերպում:

3. Կազմակերպության կառավարումը

3.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Համայնքի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը և նրա տեղակալը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3.3. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկային և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը:

ե) Հաստատում է Կազմակերպության կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

3.4. Համայնքի ղեկավարը իրականացնում է Կազմակերպությունում ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց ոչ պատշաճ կատարման համար:

3.5. Համայնքի ղեկավարը՝

ա) Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) Իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

դ) Լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) Վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքը խոտանման կամ վարձակալության հանձնման համար,

է) Հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և(կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

թ) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

ժ) Իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.6. Կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենն, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպության տնօրենն օրենքով Հիմնադրի ու Համայնքի ղեկավարը որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարը որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է Համայնքի ղեկավարը,

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին,

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն և չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքից,

ե) Տնօրենի պաշտոնին նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանն պատճառած վնասի համար,

զ) Կազմակերպության գործադիր մարմնին նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, Համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.7. Կազմակերպության տնօրենը.

ա) Առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու Համայնքի ղեկավարի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) Տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) Աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր: Կազմակերպության կազմում հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ ստեղծելու դեպքում աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է դրանց ղեկավարներին (տնօրեններին),

ե) Բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) Կատարում է աշխատանքի բաշխում,

է) Սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) Օրենքով ու սույն կանոնադրությամբ սահմանված լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) Ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում Համայնքի ղեկավարին,

ժ) Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Համայնքի ղեկավարի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Համայնքի ղեկավարի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5. Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կամ Համայնքի ղեկավարի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7. Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:

4.8. Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված ու ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները,

իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները ու հանգանակությունները, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

4.10. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

4.11. Կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.12. Կազմակերպության կողմից այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով:

4.13. Կազմակերպության հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

4.14. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

4.15. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.16. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

5.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

5.2. Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Համայնքի բյուջե:

5.3. Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 097

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 046,047,049,050,051,052 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, 18-րդ հոդվածի առաջին մասի 42-ին կետով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասով

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փողոցային լուսավորություն եվ կանաչապատում»համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին թիվ 046 որոշումը:

2. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի փողոցային լուսավորություն և կանաչապատում» համայնքային համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 047 որոշումը

3. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի <<Մշակույթի տուն և գրադարան»համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին թիվ 049 որոշումը

4. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» համայնքային համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 050 որոշումը

5. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի փողոցային լուսավորություն և կանաչապատում>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 051 որոշումը:

6. Անվավեր ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզիՄեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան>>համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 052 որոշումը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 096

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ, 9-րդ և 15-րդ մասերով և հիմք ընդունելով «Արմոսֆերա» ՍՊԸ-ի լիազորված անձ Վահե Խաչատրյանի 2022 թվականի մարտի 15-ի դիմումը ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Մեծամոր համայնքի Ակնալիճ բնակավայրում «Արմոսֆերա» ՍՊԸ- ին սեփականության իրավունքով պատկանող 10.7 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության և վարելահողեր գործառնական նշանակության հողամասից /սեփ. վկայական N19112021-04-0031, ծածկագիր 04-004-0113-0016/ 0,4113 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության և գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասի՝ մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու համար :

2.Փոփոխված 0.4113 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 095

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի երրորդ մասով, Մեծամոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 12-Ա որոշումով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Մեծամոր համայնքի ավագանին որոշում է

1.Սամվել Սարգսի Գալստյանին նշանակել Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:
2.Մեծամոր համայնքի ղեկավարի տեղակալի գործառույթները սահմանված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2022թ.մարտի 28-ի N 094որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմինները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, իրականացնում են ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորություններ ու կրում են ՀՀ օրենքով սահմանված պարտականություններ:

2. Մեծամոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինը Մեծամոր համայնքի ղեկավարն է:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, << Երեխայի իրավունքների մասին>>, << Սոցիալական աջակցության մասին>>, << Քաղաքացիական կացության ակտերի մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ:

4. Խնամակալության և հոգաբարձության մարմինը իր իրավասությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, համագործակցում է մարզպետարանի, այլ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության մյուս կողմերի հետ:

5. Խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և

ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն ստանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Խնամակալության և հոգաբարձության մարմինը անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն է ստանում նաև մարզպետարանից:

6. Խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Խնամակալության և հոգաբարձության մարմինն իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

II. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Խնամակալության և հոգաբարձության մարմնի խնդիրներն են՝

1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

2) ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը.

3) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ խնդիրներ:

III. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Խնամակալության և հոգաբարձության մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում՝

1) Սահմանում է՝

ա. խնամակալություն տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,

բ. հոգաբարձություն 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ.

2) իրականացնում է՝

ա. երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության, այլ դեպքերում

բ. համայնքի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը՝ ՀՀ կառավարության 2006թ. N 962-Ն որոշմամբ սահմանված կարգի,

գ. խնամատար ծնողների ընտրությունը՝ ՀՀ օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ,

դ. << Սոցիալական աջակցության մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման N1 հավելվածի 14-րդ, 16-րդ, 60-րդ կետերով և N 2 հավելվածի 65-

րդ ու 66-րդ կետերով սահմանված գործառույթները,

ե. խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,

զ. հսկողություն խնամակալների և հոգաբարձունների գործունեության նկատմամբ, այդ թվում մշտադիտարկումների միջոցով,

է.վերահսկողություն խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ,այդ թվում մշտադիտարկման միջոցով,

ը. երեխայի դաստիարակությանը հավակնող անձի /անձանց/ կյանքի պայմանների հետազոտություն,

3) ապահովում է՝

ա. ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքը՝ ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու դեպքերում,

բ. երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը (կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը կամ որդեգրումը կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը),

4) թույլատրում է՝

ա. խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, անհատույց օգտագործման, գույքը գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, ինչպես նաև նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքներ,

բ. հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա,

գ. սահմանված կարգով ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա.

5) բացահայտում է՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկությունները,

բ. ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը,

գ. համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին, միաժամանակ նախաձեռնում դրանց պետական գրանցման գործընթացը.

6) համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը և դրա մասին իրազեկում ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմիններին.

7) հաշվի են առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներն ու կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան.

8) ընտրում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը (խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը, խնամակալ, հոգաբարձու նշանակելը)՝ ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից.

9) մասնակցում է՝

ա. դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը,

բ. երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին,

գ. դատարանում ծնողական իրավունքների վերականգնման քննությանը,

դ. ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննությանը,

ե. դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում,

զ.երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը,

է. քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ.

ը.դատարանում ծնողական իրավունքից զրկելու մասին գործերի քննությանը.

10) աջակցում է՝

ա. խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,

բ. խնամակալներին և հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում.

գ.երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն՝ համագործակցելով ծնողի կամ այլ օրինական ներկայացուցիչի հետ ,

դ. երեխային խնամատար ընտանիքում ինտեգրվելուն, ինչպես նաև երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու գործնթացին.

11) քննության են առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.

12) լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.

13) քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում առկա գենդերային հիմնախնդիրները.

14) նշանակում են քաղաքացու օգնական (պատրոն)՝ այն չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով և համաձայնությամբ, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնելու պաշտպանել իր իրավունքները և պարտականությունները.

15) կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում այն ընտանիքներում ,որոնցում առկա է երեխայի իրավունքների և շահերի խախտման վտանգ.

16) իրականացնում են աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով.

17) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարան են ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի /անձանց/ կյանքի հետազոտության ակտը և դրա հիման վրա՝վեճի էության մասին եզրակացությունը.

18) կնքում է՝

ա.գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր իր կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում,

բ.պայմանագիր խնամատար ծնողների հետ երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի N 459-Ն որոշմանը համապատասխան.

19) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 45 –րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում նշանակում են անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի կառավարիչ՝ վերջինիս հետ կնքելով հավատարմագրային կառավարման պայմանագիր.

20) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում դիմում են դատարան՝ անձին մահացած ճանաչելու համար.

21) խնամակալին կամ հոգաբարձուին ազատում են իր պարտականությունների կատարումից՝

ա.երեխային իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,

բ. խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող,բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանօրինակ այլ հաստատությունում տեղավորելիս, եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին,

գ.հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն,խնամարկյալի հետ փոխըմբռնման բացակայության և այլն) առկայության դեպքում՝ խնամակալի կամ հոգաբարձուի խնդրանքով,

դ.խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքում՝ միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով նրան սահմանված պատասխանության ենթարկելու համար.

22) երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան,անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին /նրանցից մեկին / ծնողական իրավունքից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հարցով.

23) դիմում են դատարան 14-18 տարեկան երեխայի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրյուն տնօրինելու իրավունքը սահմանափակելու կամ նրան այդ իրավունքից զրկելու միջնորդությամբ.

24) կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները.

25) մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում կարող են պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին չխանգարելու այդ շփմանը.

26) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների.

27) երեխայի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու / էմանսիպացիա / մասին.

28) ընդունում են որոշում ընտրված երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի N 459-Ն որոշման համաձայն.

29) տալիս են համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի /հոգաբարձուի / բացակայության դեպքում.

30) <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքում կայացնում են որոշում առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցիչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու վերաբերյալ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալութունների /բաժինների / եզրակացության հիման վրա.

31) իրենց գործառույթներն իրականացնելիս հաշվի են առնում ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ, իսկ այն հաշվի չառնելու դեպքում որոշման մեջ անրադառնում են այդ փաստին՝ նշելով այն հանգամանքները որոնք հիմք են հանդիսացել միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը մասամբ կամ ամբողջությամբ հաշվի չառնելու համար ,ինչպես նաև կարող են առաջարկել եզրակացության վերանայում կամ այլընտրանքային եզրակացություն՝ ներկայացված այլ մասնագետի կոզմից.

32) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված այլ լիազորություններ.

10. Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակում են երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալություն սահմանելու, կամ որդեգրելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու ,իսկ դրանց անհնարինության դեպքում՝ ընտանեկան միջավայրում որևէ այլ միջոցով խնամք ապահովելու ուղղությամբ աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ մարզպետարանների սոցիալական աջակցության տարացքային գործակալությունների / բաժինների /, ,,Սոցիալական աջակցության մասին,, ՀՀ օրենքով սահմանված՝ աջակցող ցանցի այլ անդամների,ինչպես նաև երեխաներին խնամք տրամադրող ՝բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների այլ կազմակերպությունների հետ:

IV. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

11. Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:

12.Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է տեղակալ և քարտուղար:

13. Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

14. Հանձնաածողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունյների /բաժինների/ աշխատողներ, համայնքի մանկավարժներ , հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ /համաձայնությամբ/:

15. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի, մասին և համապատասխան տեղեկատվություն է փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրի հայտարարությունների վահանակին:

16. Հանձնաժողովի նիստը նախապատրաստելու և զեկուցմամբ հանդես գալու համար հանձնաժողովի նախագահի կազմից նշանակվում է հիմնական զեկուցող:

17. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի լրավունք : Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ,իսկ ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

18. Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով, հանձնաժողովը կազմում ու խնամակալության մարմնին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է քննարկվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումը և ունի բացառապես խորհրդատվական բնույթ: Հանձնաժողովի անդամը հանձնաժողովի ընդհանուր դիքորոշումից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում կարող է քննարկվող հարցի վերաբերյալ գրավոր ներկայացնել իր հստակ դիրքորոշումը /կարծիքը/:

19.Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձիք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց ներկայացուցիչները և /կամ/ լիազորված անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա գտնվել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի /անձանց/ համաձայնության դեպքում, որին /որոնց/ վերբերում է տվյալ քննարկումը:

20.Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամները: Հանձնաժողովի նիստին ներկա անդամի հատուկ կարծիքը կցվում է արձանագրությանը և համարվում է արձանագրության անբաժանելի մասը: Նիստի արձանագրությունը տրամադրվում է հանձնաժողովի բոլոր անդամներին, իսկ դրա՝ հանձնաժողովի և քարտուղարի կողմից ստորագրված քաղվածքը կարող է տրամադրվել նիստին մասնակցած այլ անձանց կամ

նրանց ներկայացուցիչներին:

21. Հանձնաժողովի անդամները մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են հարցեր ուղղել զեկուցողին, հանդես գալ առաջարկություններով, հայտնել իրենց դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ:

ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Մեծամոր համայնքի ավագանու
2022թ.փետրվարի 22-ի N 094 որոշման

N	Անուն Ազգանուն Հայրանուն	Պաշտոն	
1.	Հովհաննիսյան Մարատ Միհրանի	Աշխատակազմի քարտուղար	Հանձնաժողովի նախագահ
2.	Բաղդասարյան Վարդան Լեոնիկի	Սոցիալակ աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ	Հանձնաժողովի տեղակալ
3.	Ստեփանյան Բենիկ Յուրիկի	Կրթության ,մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ	Հանձնաժողովի անդամ
4.	Ավետիսյան Անուշ Հովհաննեսի	Սոցիալակ աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի քարտուղար
5.	Ադամյան Էրիկ Ռոբիկի	Իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ	Հանձնաժողովի անդամ
6.	Հարությունյան Անահիտ Վարդգեսի	Համայնքի ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
7.	Շահվերդյան Արմեն Անդրանիկի	Ոստիանության Մեծամորի բաժնի ԱԳ և ԸԲԿԽ Ավագ տեսուչ	Հանձնաժողովի անդամ
8.	Գրիգորյան Մարջանիկ Ապրեսի	Հույսի մեծամոր ՀԿ ներկայացուցիչ	Հանձնաժողովի անդամ
9.	Հարությունյան Արթուր Դավթի	Սոցիալակ աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ	Հանձնաժողովի անդամ

Աշխատակազմի քարտուղար՝ Մ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 094

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ և 12-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մեծամոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը ՝համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել Մեծամոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2011 թվականի ապրիլի 26-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» N 16-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ավագանու 2022 թվականի մարտի 28-ի
N 093-Ա որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28 -Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 046,047,049,050,051,052 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 022-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՄԱՐՏԻ 2022թվականի N 093

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28 -Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է .

1.Հաստատել Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 28-ի՝ թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ԱՖՐԻԿՅԱՆ ԼԻԼԻԹ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ